25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 231(5083)

# Ազգ

Azg

ISSN: 1829-1651

## Հայտարարություն

Սույն թվականի դեկտեմբերի 22-ին Թեքեյան կենտրոնում տեղի ունեցավ Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության ընդլայնված նիստ, որը Հայաստանում եւ Սփյուռքում գործող Ռամկավար Ազատական կուսակցության ղեկավար մարմինների անունից հայտարարում է՝

Ռամկավար Ազատական կուսակցությունը, նկատի առնելով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի արդյունավետ ու հավասարակշռված քաղաքական գործունեությունը, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունն աստիճանաբար բարելավում է իր տնտեսական եւ քաղաքական կացությունը, որոշեց պաշտպանել նրա թեկնածությունը եւ սատարել նրան ընտրությունների ընթացքում: Միաժամանակ կուսակցությունը հույս է հայտնում, որ նախագահ Սերժ Սարգսյանը առաջիկա նախագահական ժամանակահատվածում եւս կանի ամեն հնարավորը ժողովրդի կենսամակարդակի բարձրացման, արտաքին քաղաքական մարտահրավերներին արժանավայել դիմագրավելու, Արցախյան խնդիրը կարգավորելու եւ Հայ դատին արդարացի լուծումներ գտնելու ուղղությամբ:

Ռամկավար Ազատական կուսակցություն

## «Ոչ, ախպեր ջան»

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Մեր աչքի դեմ ժամանակաշրջան է փոխվում, ՀՀՇ-ի ժամանակները վերջնականապես ավարտվեցին փաստորեն (խոսքը կառույցի մասին չէ ֆորմալ առումով): Եվ ոչ միայն: Մյուս քաղաքական ուժերն էլ վերադասավորում են ուժերը, փորձելով նոր դիմագիծ ձեռք բերել եւ հասկանալով, որ նախագահական ընտրություններից հետո պետք են դնելու դեպի առաջ միտող նոր ժամանակաշրջանի մեջ:

ՀՀՇ 17-րդ համագումարին նախկինում բազմաթիվ բարեկամ քաղաքական ուժեր եւ անձինք ներկա չէին: ՀՀՇ համագումարից եւ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանից սպասում էին առաջադրման կամ չառաջադրման որոշում, բայց նա այդ որոշումը հետաձգելով այսօր-վաղվա, որոշեց խոսել ազգը ռուսամետների եւ արեւմտամետների բաժանող «որոշ անպատասխանատու մարդկանց մասին» ու Հայաստանի, հայ ժողովրդին երկու մասի բաժանելը Սահմանադրության դավաճանություն եւ խառնակչությամբ զբաղվել որակելով: Այսինքն ըստ էության խոսելու փոխարեն՝ նա խոսքը գցեց կտուրը, քանի որ ով-ով, նա ամենից լավ է հասկանում, որ ընդդիմության դիմագիծն ու կազմությունը փոխվում են, եւ իշխանությունն էլ, Սերժ Սարգյանի առաջադրումով եւ հաղթանակով վերջին անգամ է այս տեսքով գեներացվելու (սա բացահայտ նշել էր Արամ Զ.Սարգսյանը. նա վախենալու բան չուներ):

Մինչդեռ Տեր-Պետրոսյանն այդպիսի բան խոստովանելով՝ ստիպված էր խոստովանել արմատական ընդդիմության վերջնական ֆիասկոն (խորհրդարանական ներկայությունն է միայն տրտի մխիթարանք մնում) եւ այն, որ նա առաջարկում է փաստորեն առաջիկա երկար տարիների պայքարի համար դիրքավորվել, քանի որ այս նախագահական ընտրություններից սպասելիք չկա: Ու, բնական է, որ նա խոսում էր ազգը ռուսամետների եւ արեւմտամետների բաժանող ինչ-որ վիրտուալ, անբիցիաներով տառապող մարդկանց արկածախնդրական գործունեության մոտիվացիայի մասին, դա ավելի շատ գործակալական կողմնորոշում անվանելով, քան թե քաղաքական կամ արժեքային: Նույն կերպ անվանեց եւ արեւմտամետություն, եւ ռուսամետություն քարոզողներին. «Մենք ոչ արեւմտամետ պիտի լինենք, ոչ ռուսամետ, միակողմանի կողմնորոշումը որեւէ ազգի դեռ բարիք չի բերել, որովհետեւ ստեղծել է որոշ բարեկամներ, բայց ստեղծել է նաեւ բազմաթիվ թշնամիներ...Հայաստանը պետք է ոչ թե արեւմտամետ կամ ռուսամետ լինի, այլ՝ չպետք է լինի հակաամերիկյան կամ հակառուսական»:

Տես էջ 8

## Ափսոսանք, բայց ոչ ներողություն

ԱԺ պատգամավոր Մհեր Սեդրակյանի եւ «Ա1 պլյուս»-ի լրագրող Մհեր Արշակյանի միջեւ օրերս տեղի ունեցած միջադեպից հետո երեկ հայտարարություն է տարածել Մ. Սեդրակյանը.

«Ափսոսում եմ մի քանի օր առաջ Ազգային ժողովում իմ եւ «Ա1 պլյուս» հեռուստաընկերության լրագրողի միջեւ տեղի ունեցածի համար: Այո՛, հարգարժան լրագրողին հաջողվեց ինձ նյարդայնացնել, հետո ամենը խնամքով մոնտաժելով՝ աղավաղել իրողությունը: Բայց դա երեւի այլեւս կարեւոր էլ չէ:

Սա թերեւս հենց այն դեպքն է, երբ ե՛ւ լրագրողը, ե՛ւ պատգամավորը մեր ողջ հասարակությունից, մասնավորապես բոլոր լրագրողներից ներողություն խնդրելու կարիք ունեն. մեկը՝ լրագրողական էթիկան խախտելու, մյուսը՝ պատգամավորական: Ես անկեղծորեն իմ ափսոսանքն եմ հայտնում նյարդային պահին հնչած խոսքերի համար»:

## Նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է ՌԱԿ ներկայացուցիչներին

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր ընդունել է Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) ներկայացուցիչներին՝ ատենապետ Հակոբ Ավետիքյանի գլխավորությամբ:

ՌԱԿ ղեկավար մարմնի ներկայացուցիչները Հանրապետության նախագահին հայտնել են կուսակցության Հանրապետական վարչության ընդլայնված նիստում օրերս կայացրած որոշման՝ առաջիկա նախագահական ընտրություններում Սերժ Սարգսյանի թեկնածությունը պաշտպանելու եւ ընտրությունների ընթացքում նրան սատարելու մասին: ՌԱԿ ներկայացուցիչները տեղեկացրել են Նախագահին, որ կուսակցության վարչությունը, լիազորված լինելով, այդ մասին նաեւ հայտարարություն է տարածել Հայաստանում եւ Սփյուռքում գործող Ռամկավար ազատական կուսակցության ղեկավար մարմինների անունից:

Սերժ Սարգսյանը շնորհակալություն է հայտնել Ռամկավար ազատական կուսակցությանը՝ վստահության եւ առաջիկա նախագահական ընտրություններում իր թեկնածությունը պաշտպանելու համար:

*ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՄԼՈ ԳՐԱՍԵՆՅԱԿ*

## Փոփոխությունները հասան Մինսկի խումբ

Նախագահ Օբաման հանգստյան օրերին ներկայացրեց ԱՄՆ պետքարտուղարի նոր թեկնածուին. Ջոն Քերրին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի խոսնակն էր, որտեղ, հիշեցնենք, ընդունվեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող ամերիկյան օրինագիծը: Ինքը՝ Մասաչուսեթսի նահանգից ընտրված 68-ամյա սենատոր Քերրին հայամետ գործչի անուն ունի, ճիշտ է, սենատոր Հիլարի Քլինթոնն էլ, մինչ պետքարտուղար դառնալը, հայկական շրջանակների հետ բոլորովին այլ բառապաշարով էր խոսում Ցեղասպանության մասին:

Ուշագրավ է, որ Քերրիի փոխարեն ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը կարող է գլխավորել մեկ այլ հայամետ սենատոր՝ Մենենդեսը, որը եւս իր մասնակցությունն է ունեցել Ցեղասպանության բանաձեւը կազմելու, դրա ընդունման աշխատանքներին, բացի դրանից՝ Արցախին ամերիկյան օգնության չափի բարձրացման կողմնակիցներից է:

Ամերիկյան արտաքին քաղաքականությունն իրականացնող այս պաշտոնյաների փոխարինման գործընթացից անմասն չի մնացել նաեւ ԵԱՀԿ Մինսկի խումբը: Ինչպես հաղորդում է Regnum գործակալությունը, Մինսկի խմբում իր դիվանագիտական ծառայությունն ավարտում է դեսպան Ռոբերտ Բրադկեն, իսկ նրան ժամանակավորապես, մինչ պաշտոնական հաստատումը, կփոխարինի Ջան Քելլին: Վերջինս 2010-ից ԵԱՀԿ-ում ԱՄՆ ներկայացուցիչն է, 2007-09 թթ. ղեկավարել է պետքարտուղարության Ռուսաստանի բաժինը, իսկ ավելի վաղ 4 տարի աշխատել է Թուրքիայում ամերիկյան դեսպանատանը՝ որպես մամլո քարտուղար:

Հ. ԱՓՅԱՆ

## «Թուրքիան աշխարհի խոշորագույն կալանավայրն է»

Երեկ այդ մասին տեղեկացրել էր odatv.com կայքէջը: Տեղեկության համաձայն, «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպությունը, հրապարակելով օրերս 2012 թվականի զեկուցագիրը, նշել է, որ կալանված 42 լրագրողի եւ մամուլի 4 աշխատողի առկայությամբ Թուրքիան դարձել է «աշխարհի խոշորագույն կալանավայրը»:

Կենտրոնը Փարիզում գտնվող այս կազմակերպության տվյալներով, 2012-ն աշխարհում նույնքան մահաբեր է եղել լրագրողների համար, որքան 1995-ը, քանի որ ընթացիկ տարում սպանվել է 88 թղթակից եւ մամուլի 4 աշխատակից: Աշխարհում մամուլի ազատության համար պայքարող այս կազմակերպության համաձայն, ձերբակալված լրագրողների ընդհանուր թիվը Թուրքիայում 72 է, որից 42-ը կալանված, ընդ որում՝ տեղեկություն ձեռք բերելու եւ տարածելու մեղադրանքով:

Անցյալ տարի 1044-ի հասնող կալանված եւ ձերբակալված լրագրողների թիվն աշխարհում 2012-ին կրճատվելով 879-ի, 16 տոկոսով նվազել է, իսկ Թուրքիայում տեղի է ունեցել նվազման միտումների ճիշտ հակառակը: Կալանված լրագրողների թիվն աշխարհում 193 է, որից 42-ը՝ թուրք լրագրողներն են: Նվազման միտումներին հակառակ, մեկ տարում կալանված լրագրողների թվի կրկնապատկումը Թուրքիայում «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպությունը պայմանավորել է երկրում քրդական հարցի ակտիվացմամբ եւ մատնանշել. «Օրենսդրական սահմանափակ բարեփոխումներն ի վիճակի չեղան սանձահարել «ահաբեկչության դեմ պայքարի» քողի տակ իրականացվող հալածանքները, հետաքննություններն ու կալանքը: Երկրում հալածանքի հենքի վրա ազգային անվտանգության առաջնահերթության սկզբունքով գործող դատաիրավական համակարգը առանձնապես չի հարգում քաղաքացիների իրազեկման ազատության եւ արդար դատավարության իրավունքները»:

Զեկուցագրի վերջում «Լրագրողներ առանց սահմանի» կազմակերպությունը ձերբակալված եւ կալանված բոլոր լրագրողներին ազատ արձակելու կոչ է արել թուրքական իշխանություններին:

Ս. Զ.

## «Պարոն նախագահ, Դուք բոլորի մեջ մեկը չեք, Դուք մեկն եք բոլորից»




«Օրինաց երկիր» կուսակցությունը գալիք նախագահական ընտրություններում սատարելու է գործող նախագահ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածությանը, եւ պատրաստ է ակտիվորեն ներգրավվել Սերժ Սարգսյանի նախընտրական աշխատանքներում: Վաղուց արդեն պարզ այս իրողությունը ՕԵԿ-ը հաստատեց շաբաթ օրը, Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում 2242 պատվիրակների ներկայությամբ տեղի ունեցած ՕԵԿ 11-րդ արտահերթ համագումարում, որին այլ կուսակցություններից ներկա էին գործող նախագահ Սերժ Սարգսյանը, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը եւ ԱԺ-ում ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը՝ բոլորն էլ միայն ՀՀԿ-ից:

«Հաշվի առնելով 2013-ի փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների նշանակությունը ՀՀ ժողովրդավարական քաղաքական համակարգի, սոցիալական եւ իրավական պետության կայացման գործում, ՕԵԿ 11-րդ արտահերթ համագումարը հայտարարում է, որ կուսակցությունը գալիք նախագահական ընտրություններում սատարելու է ՀՀ նախագահ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածությանը՝ պատրաստակամություն ստանձնելով համագործակցելու երկրի հետագա կայուն զարգացման, պետության առջեւ ծառացած արտաքին եւ ներքին մարտահրավերներին ըստ արժանվույն դիմակայելու եւ ժողովրդավարական բարեփոխումները խորացնելու գործում», մասնավորաբար ասված է ՕԵԿ համագումարում ընդունված կուսակցության հայտարարության մեջ:

Տես էջ 2

# Ամեն առիթով Ադրբեջանը «վախենում է» ստատուս քվոյից

Հակամարտությունների կարգավորման ձգձգումները սահմանափակում են խաղաղաշինությանն ուղղված ջանքերը՝ դրանց վերսկսման լրջագույն վտանգ ներկայացնելով: ԱԳՆ հաղորդագրության համաձայն՝ դեկտեմբերի 20-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում տեղի ունեցած 2012թ. վերջին բաց քննարկմանը, որ նվիրված է եղել «Խաղաղաշինությունը հակամարտությունից հետո» թեմային, իր ելույթում այս մասին նշել է ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ **Կարեն Նազարյանը**:

2005թ. դեկտեմբերի 20-ին ի կատարումն ՄԱԿ-ի գագաթաժողովի որոշման ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի եւ Գլխավոր ասամբլեայի որոշմամբ ստեղծված ՄԱԿ-ի խաղաղաշինության հանձնաժողովը միջկառավարական խորհրդատվական մարմին է: ՄԱԿ-ում գործում են նաեւ Խաղաղաշինության հիմնադրամը եւ Խաղաղաշինության աջակցման գրասենյակը, որոնք իրենց գործունեությունը կազմակերպում եւ համակարգում են կառավարությունների, քաղաքացիական հասարակության, միջազգային ֆինանսական հաստատությունների, դոնորների ու տարածաշրջանային դերակատար կառույցների հետ:

Դեկտեմբերի 20-ի քննարկմանը զեկույց է ներկայացրել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը, իսկ կազմակերպության անդամ պետությունների ներկայացուցիչները՝ ներառյալ Ադրբեջանի, ապա նաեւ Հայաստանի դեսպանները, հանդես են եկել ելույթներով:

ՄԱԿ-ի պաշտոնական կայքէջի համաձայն, այդ կառույցում Ադրբեջանի ներկայացուցիչ **Թոֆիգ Մուսաեւը**, այլեւայլ հայտարարությունների շարքում, ներկայացրել է, թե «խաղաղաշինությունը չպետք է աջակցի կամ լեգիտիմացնի ստատուս քվոն, որ բխում է միջազգային իրավունքի խախտումից, եւ եթե այդպես արվի, ուրեմն խաղաղաշինությունը կձախողի ամուր խաղաղության ու երկարաժամկետ կայունության անհրաժեշտ հիմքեր ստեղծելու առաքելությունը»:

Հայաստանի ներկայացուցիչ Կարեն Նազարյանն իր ելույթում մասնավորապես նշել է, որ կարգավորման գործընթացների ձգձգումը ոչ միայն վնասում է տարածաշրջանային համագործակցությանը եւ մեծապես սահմանափակում խաղաղաշինությանը միտված ջանքերը, այլ նաեւ պարունակում է հակամարտությունների վերսկսման լրջագույն սպառնալիքներ: Նրա խոսքերով՝ հակամարտությունից հետո ընկած ժամանակաշրջանը հնարավորություն է ընձեռում խաղաղարար գործընթացի միջոցով կայուն զարգացման հիմքեր ստեղծելու, որի համար առաջին հերթին անհրաժեշտ է դրսեւորել քաղաքական կամք ու վճռականություն:

Դեսպան Նազարյանը նաեւ նշել է, որ Անվտանգության խորհուրդը հաճախակի է անդրադառնում նշված թեմային՝ դրանով իսկ կարեւորելով խաղաղաշինության գործընթացների եւ մեխանիզմների իրականացումը, որոնք ուղղված են կանխարգելելու հակամարտությունների վերսկսումը, եւ որոնք հարատեւ անվտանգության եւ կայունության, խաղաղության ու զարգացման անհրաժեշտ նախադրյալներ են:

Նիստում ընդունվել է նախագահական հայտարարություն, որում նշվում է, որ հակամարտությունից հետո խաղաղաշինության առաջնահերթությունների ու ռազմավարության սահմանման հարցում առաջնային պատասխանատվությունը ազգային իշխանություններինն է:

Վ. Պ.

# ՀԲԸՄ-ն շարունակում է օժանդակել սիրիահայերին

Օն-լայն եւ հեռախոսանվիրատվությունների մեկնարկից ի վեր ՀԲԸՄ-ն համայն աշխարհի սփյուռքահայ նվիրատուներից շարունակում է նյութական օժանդակություն ստանալ եւ ուղղորդել հազարավոր սիրիահայ ընտանիքներին, որոնք ճգնաժամային իրավիճակում են հայտնվել Սիրիայում տիրող հակամարտության հետեւանքով: Նախնական 1 միլիոն դոլարի ընդհանուր գումարին այժմ հնարավոր է եղել մոտ 750 հազար դոլար եւս հավաքել, որի 100 հազարը նվիրել են Վաչե եւ Թամար Մանուկյանները ի նպաստ ստիպողաբար Լիբանան տեղափոխված սիրիահայ ուսանողների: Բացի նյութական օժանդակությունից, ՀԲԸՄ-ի 80 կամավորներ օրական ավելի քան 3000 ընտանիքների սննդի արկղեր են բաժանում առաջին անհրաժեշտության ապրանքներով շաքարավազ, բրինձ, ոսպ, կարտոֆիլ, ձու, ձեթ եւ այլն: ՀԲԸՄ-ի Հալեպի կենտրոններից մեկն էլ արդիական բուժկետի է վերածվել՝ հոգ տանելու համար սիրիահայերի առողջական պահանջներին:

ՀԲԸՄ-ի աշխատակիցներն ու կամավորները ամեն ինչ անում են, որ օժանդակությունները հասնեն յուրաքանչյուր ընտանիքի:

Հ. Ծ.

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

# Հայկական կողմը 10 անգամ քիչ է պատասխանում հրադադարի ռեժիմի խախտմանը



**Ադրբեջանական զինված ուժերն անցնող տարվա ընթացքում 16.000 անգամ խախտել են հրադադարի ռեժիմը: Այս ցուցանիշը նախորդ տարիների համեմատությամբ ավելացել է: 2011-ին արձանագրվել էր 12.700 իսկ 2010-ին՝ 7.300 դեպք: «Սա փաստում է, որ հակառակորդը փորձել է ավելի մեծ լարվածություն ստեղծել սահմանային գծում, փորձել է ինչ-որ խնդիրներ լուծել, որոնք չեն հաջողվել», ասում է պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը:**

**Ռազմական փորձագետը շեշտում է, որ հայկական կողմի հակահարվածները եղել են դիպուկ, եւ հակառակորդը կորուստներ է ունեցել: Դրան զուգահեռ, հայկական կողմը 10 անգամ քիչ է պատասխանել հրադադարի ռեժիմի խախտման դեպքերին: Հովհաննիսյանի գնահատմամբ վիճակագրությունն ապացուցում է մեր զինված ուժերի մարտունակության բարձր աստիճանը: Հովհաննիսյանը հավելում է, որ ռեժիմի խախտման ժամանակ հակառակորդը 3.000 անգամ կրակել է փոքր եւ միջին տրամաչափի դիպուկահարներից, իսկ 350-400 անգամ՝ մեծ տրամաչափի:**

**Անդրադառնալով զորակոչին՝ Հովհաննիսյանն ասաց, որ տարին կարելի է անվանել աննախադեպ առաջընթացային զորակոչի ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարի առումով: Գերատեսչությունը այդ հարցի առնչությամբ համագործակցում է նոր մասնագետների եւ գործընկերների հետ:**

**Հովհաննիսյանը հավաստիացնում է, որ զինված ուժերում յուրաքանչյուր հանցանք կամ զանցանք կատարած անձ ստանում է համապատասխան պատիժ: «Այլ հարց է, որ տուժածների բողոքն այս առումով ուղղված է նրան, որ վերջիններս գոհ չեն այդ պատիժներից: Բայց այս առումով մեր գերատեսչության աշխատանքը չէ, որ թերի է, կան հատուկ իրավապահ մարմիններ, որոնք աշխատում են այս ուղղությամբ: Եթե հանցանքը կատարվել է եւ գործընթացը փոխանցված է համապատասխան մարմիններին, մենք այլեւս չենք կարող միջամտել»:**

**Անդրադառնալով բանակում ինքնասպանություններին եւ սպանություններին՝ ՊՆ մամուլի քարտուղարը ներկայացրեց նախարար Օհանյանի դիրքորոշումը, որ եթե կատարվել է օրենքի խախտում, ապա կատարողը պետք է պատժվի: «Երբ ինքնասպանություն է լինում կամ սպանություն, հարազատներից բացի ամենամեծ ցավն է ապրում նաեւ մեր գերատեսչությունը, որը բացի կորստից, նաեւ իրավական պատասխանատվություն է կրում դրա համար»:**

**ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության եւ զորքերի բնակավորման վարչության պետ Աշոտ Գրիգորյանն էլ հավելեց, որ նոր տարուն սպայական կազմի համար նախատեսված է Վանաձորում, Էջմիածնում, Արարատում եւ Կարմրաքարում 5 բնակելի շենքի՝ ընդհանուր առմամբ 155 բնակարանի կապիտալ վերանորոգում: Երեւանում կառուցվելիք շենքն էլ կունենա 132 բնակարան:**

## Զինվոր է մահացել

**Ողբերգական դեպք է գրանցվել բանակում: ԼՂ զորամասերից մեկում մահացել է ժամկետային զինծառայող, շարքային Դավիթ Սարգսյանը: Մահվան կապակցությամբ հարուցվել է քրեական գործ ՔՕ 110 հոդվածի 1-ին մասի՝ «ինքնասպանության հասցնելու» հատկանիշներով: ՊՆ-ից տեղեկացնում են, որ դեկտեմբերի 23-ին, ժամը 15:30-ին զորամասի մարտական հենակետում հայտնաբերվել է 20-ամյա Սարգսյանի դին՝ մահացու հրազենային վնասվածքով:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Պարոն նախագահ, Դուք բոլորի մեջ մեկը չեք, Դուք մեկն եք բոլորից»

*1-ին էջից*

Նախագահական ընտրությունների հետ կապված այս որոշումը հայտարարեց ՕԵԿ նախագահ **Արթուր Բաղդասարյանը**: ՕԵԿ նախագահ, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Բաղդասարյանը նաեւ ընդգծեց, թե. «Ինչո՞ւ պետք է չսատարենք Սերժ Սարգսյանին, երբ երկիրը կանգնած էր քաղաքացիական պատերազմի առջեւ, իսկ արտաքին թշնամին պատրաստ էր ամեն հարմար պահի մեջքից հարվածելու»: Որպես գործող նախագահին սատարելու հիմք Բաղդասարյանը նշեց նաեւ, որ կոռուպցիայի դեմ պայքարում «այսօր որեւէ պաշտոնյա 100 դոլար կաշառք անգամ վախենում է վերցնել», ու առհասարակ՝ «Գործող նախագահի ղեկավարման տարիներին երկիրը կարողացավ առանց լուրջ ցնցումների դուրս գալ ֆինանսատնտեսական ճգնաժամից»: ՕԵԿ-ի այլ ներկայացուցիչներ, մասնավորաբար կուսակցության կանանց եւ երիտասարդական միությունների ղեկավարներն իրենց հերթին ընդգծեցին, որ




«ամբողջովին վստահում են կուսակցության առաջնորդ Արթուր Բաղդասարյանի որոշմանը՝ սատարելու գործող նախագահին», իսկ ՕԵԿ երիտասարդական միության ղեկավար **Առաքել Առաքելյանը** ՀՀ նախագահին ասաց. «Պարոն նախագահ, Դուք բոլորի մեջ մեկը չեք, Դուք մեկն եք բոլորից»:

Բացի նախագահական ընտրություններում կուսակցության դիրքորոշման արտահայտումից, ՕԵԿ համագումարն ուշագրավ էր նաեւ այն առումով, թե ի՞նչ ընթացք ունի կուսակցության «թարմացման» գործընթացը, ի՞նչ արդյունքներ են արձանագրված: Հիշեցնենք, որ այս տարի մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրություններից հետո ՕԵԿ-ը նախաձեռնեց կուսակցության վերակազմավորման գործընթաց, եւ այժմ, մի քանի ամիս անց արդեն, Արթուր Բաղդասարյանը ՕԵԿ 11-րդ արտահերթ համագումարի ամբիոնից հայտարարեց. «Այսօր արդեն մեր կուսակցությունում պատահական մարդիկ չկան»: Ըստ ՕԵԿ-ին անդամակցելու նոր կանոնների՝ ցանկացողը պետք է որոշ ժամանակ փորձաշրջան անցնի, նոր միայն, կուսակցությանը համապատասխանելու պարագայում, ընդգրկվի ՕԵԿ-ում: Կուսակցության քարտուղար **Արթուր Ղուկասյանը** տեղեկացրեց, որ դեկտեմբերի 20-ի դրությամբ, ՕԵԿ-ի անդամ են ՀՀ 71 հազար 318 քաղաքացի, որոնցից 62,3 տոկոսը կանայք են, 57 տոկոսը՝ բարձրագույն կրթություն ունեցող:

Ուրեմն հենց այս՝ 71 հազար 318 անդամ ունեցող կուսակցությունն էլ պատրաստ է, ինչպես կուսակցության առաջնորդն ասաց. «Ասել ենք սատարում ենք, ուրեմն սատարում ենք՝ մեկ մարդու պես, չխնայելով մեր էներգիան. ժողովրդի ասած՝ մենք «տակից խաղեր տվող չենք»:

Հ. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# «Հայաստանի տնտեսական աճը կլինի 7,1 տոկոս»

## *Ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը նաեւ քիչ հավանական է համարում տնտեսական ճգնաժամի երկրորդ ալիքը*

Ֆինանսների նախարարությունը կանխատեսում է, որ Հայաստանի տնտեսական (համախառն ներքին արդյունքի՝ ՀՆԱ) աճը 2012-ին կլինի 7,1 տոկոս: Այդ մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանը**: Այս առումով նա տարին հաջողված համարեց, նկատի ունենալով տարածաշրջանային ավելի ցածր՝ 4-4,5 տոկոս տնտեսական աճը, գնաճի ցածր մակարդակը, ներմուծման նկատմամբ արտահանման ավելի բարձր աճի դինամիկան: Խոսելով 2012-ին սպասվող տարեկան ցուցանիշների մասին, ֆինանսների նախարարը մատնանշեց նաեւ տնտեսության բոլոր ճյուղերի (բացառությամբ շինարարության) եւ հատկապես արդյունաբերության աճը, ցածր գնաճը եւ պետական բյուջեի դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ:




Ինչ վերաբերում է բյուջեով նախատեսված ցուցանիշներին, ապա տեղեկացվեց, որ այս տարվա հունվար-նոյեմբերին պետական բյուջեի եկամուտները կազմել են 841 մլրդ դրամ, որից հարկային եկամուտները՝ 792 մլրդ դրամ, ապահովելով տարեկան ծրագրի ավելի քան 90 տոկոսը: Պետական պարտքը տարեվերջին կլինի 4,3 մլրդ դոլար, կազմելով ՀՆԱ 31,1 տոկոսը: Վաչե Գաբրիելյանի հավաստմամբ, ՀՆԱ-ի մեջ այս ցուցանիշը 2013-ին չի ավելանա: Նա նաեւ տեղեկացրեց որ 2013-ին էապես կփոխվի միջնաժամկետ ծախսային ծրագիրը՝ կապված կառավարության եւ հեռանկարային զարգացման ծրագրերի հետ:

Գնումների համակարգը անցնող տարում անցում է կատարել էլեկտրոնային եղանակի, իսկ 2013-ին էլեկտրոնային կդառնան նաեւ շրջանակային համաձայնագրերը, դրանով իսկ համակարգն ամբողջապես կդառնա էլեկտրոնային: Նախարարը վստահեցրեց, որ ամեն ինչ արվելու է այս ոլորտում չարաշահումները վերացնելու համար: Հաջորդը ներքին աուդիտի համակարգի ներդրման մասին էր: Վաչե Գաբրիելյանը հայտնեց, որ 2012-ին այն ներդրվել է 52 պետական կառավարման մարմիններում եւ Երեւանի քաղաքապետարանում, իսկ 2013-ին կներդրվի նաեւ այլ քաղաքային համայնքներում:

Օրենսդրական փոփոխություններից առանձնացվեց արտոնագրային վճարների ներդրումը, որն, ըստ ֆինանսների նախարարի, պարզեցրեց եւ բարելավեց գործարար միջավայրը եւ շրջանառության հարկի ներդրումը փոքր ծավալներ ունեցող տնտեսվարողների համար, որը նախատեսված է 2013-ին եւ որը նույնպես փոքր բիզնեսի օգտին կատարված քայլ է:

Նախարարության միջազգային ֆինանսական համագործակցությունից Վաչե Գաբրիելյանն ընդգծեց հայ-ամերիկյան եւ հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովների գործունեությունը: Առաջինի դեպքում նա կարեւորեց էներգետիկայի ոլորտում համագործակցության եւ ԱՄՆ վիզաների տրամադրման գործընթացի հեշտացման վերաբերյալ համաձայնությունները, իսկ երկրորդի դեպքում՝ գերմանական կողմի ֆինանսական աջակցության մի շարք ծրագրերին: Մասնավորապես, գերմանական կողմը 75 մլն եվրո է տրամադրել Հայաստան-Վրաստան բարձրավոլտ հոսանքահաղորդման գծի ենթակայանների կառուցմանը, 40 մլն եվրո՝ վերականգնվող էներգետիկայի զարգացման ծրագրի երկրորդ փուլին, 18,5 մլն եվրո՝ Ախուրյան գետի ջրային ռեսուրսների կառավարմանը եւ այլն:

Այս տարվա ընթացքում ֆինանսական վերահսկողության տեսչության ստուգումների արդյունքում վերականգնվել եւ վերաձեւակերպվել է 1 մլրդ 77 մլն դրամ, որից 605 մլն դրամը վերականգնվել է պետական բյուջե: Նախարարի տեղեկացմամբ, տույժեր ու տուգանքներ են կիրառվել շահումով խաղերի եւ խաղատների մոտ լիցենզավորման պայմանների եւ պահանջների խախտման համար:

«**Ազգի**» հարցը ֆինանսների նախարարին առնչվում էր այս տարվա արդյունքում սպասվող հարկեր/ՀՆԱ հարաբերակցությանը եւ եկամուտների անհավասարությունը բնորոշող Ջինի գործակցին, որի բարձր լինելը նշանակում է եկամուտների ավելի բարձր անհավասարությունը: Վաչե Գաբրիելյանը նախ խոսեց աղքատության ցուցանիշի մասին, ասելով, որ տարեկան արդյունքներով ակնկալվում է, որ 35 տոկոս աղքատությունը կնվազի 2-3 տոկոսով, իսկ Ջինի գործակցի վերաբերյալ հույս հայտնեց, որ այն կնվազի: Հարկեր/ՀՆԱ ցուցանիշն էլ այս տարի պետք է նախորդ տարվա համեմատ ավելանա 0,6 տոկոսով եւ գերազանցի 20 տոկոսը:

Շարունակելով եկամուտների բեւեռացման թեման, նախարարը նշեց, որ նման օրինաչափություն է նկատվում ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Եվրոպայում եւ ԱՄՆ-ում: Ճգնաժամի հետեւանքով ներկայումս նկատվում է տնտեսական աճ՝ առանց աշխատատեղերի ստեղծման: Հայաստանի կառավարությունը ձգտում է խրախուսել աշխատատեղերի ստեղծմամբ տնտեսական աճը: Այդ նպատակով հարկային արտոնություններ են նախատեսվելու այն գործատուների համար, որոնք նոր աշխատատեղեր են ստեղծելու:

Վաչե Գաբրիելյանի կարծիքով, տնտեսական ճգնաժամը Հայաստանը հաղթահարել է, բայց չի հաղթահարել ճգնաժամի հետեւանքները: Տնտեսական կայուն աճը վկայում է, որ ճգնաժամը հաղթահարվել է, սակայն տնտեսությունն ամբողջությամբ չի վերակողմնորոշվել եւ այժմ այդ գործընթացի մեջ է: «Ընդ որում, դա վերաբերում է ոչ միայն Հայաստանին», ավելացրեց նախարարը:

«Կլինի՞ ճգնաժամի 2-րդ ալիք»՝ ֆինանսների նախարարն ասաց, որ խոսակցություններն այդ մասին կապված են եվրոգոտու պարտքային ճգնաժամի հետ, բայց հնարավոր են նաեւ գլոբալ այլ զարգացումներ: «Հավանականությունը կա, բայց մեծ չէ: Այդուհանդերձ, ամենայն հավանականությամբ, ճգնաժամ չի լինի, բայց երբեք պետք չէ դա բացառել», եզրափակեց նախարարը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Շնորհակալ եմ, որդիս, որ շնորհակալ են

**Մեզանում հաճախ է գրվում ու խոսվում, որ բանակը փակ թեմա է, նրա մասին ամեն ինչ չէ, որ պիտի ասվի եւ նման բաներ: Չեմ վիճում, գուցե իրավացի են այդպես մտածողները: Սակայն լինում են դեպքեր, երբ ոչ միայն հարկավոր է բարձրաձայնել, այլեւ անհրաժեշտ է, որ դրանց մասին ասվի, գրվի, թող բոլորն իմանան:**

**Փոստատարը ծրար բերեց, ինչը մեր օրերում այնքան էլ հաճախ չի լինում: Կարդացի հասցեն ու խիստ անհանգիստ, որովհետեւ ստացվել է այնպես, որ վերջին տարիներին ավելի շատ ոչ ուրախ լուրեր ենք ստանում, բացեցի այն եւ մեկ շնչով կարդացի նամակը: Չգիտեմ, ինքնաբնորոշումը ամենադժվար երեւույթներից է, բայց ինձ շրջապատում «պինդ» մարդ են համարում, սակայն սկզբում ինքս էլ չհասկացա ինչ կատարվեց...: Մի խոսքով, հուզված էինք բոլորս, հպարտ: Այն զգացումն էր ճնշում, որ ուզում ես վայրկյան առաջ բոլորն իմանան, որ հպարտությունդ կատարյալ ու ամբողջական լինի:**

**Չգիտեմ ինչու, Մեծ Հայրենականի ամբողջ ծանրությունը ճաշակած, հնգակի շքանշանակիր ու երեսունից ավելի մեդալների ասպետ հորս պատկերը հառնեց առջեւս: Նրա հայացքում կարծես հավանության ու հպարտության, բայց ավելի շատ՝ պատասխանատվության կոչելու զգացողություն տեսա: Ահա նամակը, որն, ի դեպ, շարադրված է հիանալի հայերենով, անսխալ ու առանց ավելորդ ճոռոմաբանությունների, առանց որեւէ փոփոխության...**

### «Հրամանատարը ծնող է, ծնողը՝ հրամանատար»

Հարգելի Սուրեն եւ Հասմիկ Սարգսյաններ

Ձեր որդին՝ շ-ն Արթուր Սուրենի Սարգսյանը ծառայելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, պատվով է կատարում իր սրբազան պարտքը, Ձեր ծնողական պատգամը՝ ազնվորեն եւ անմնացորդ նվիրվել մեր հայրենիքի պաշտպանության գործին: Դուք կարող եք հպարտանալ, որ մեծացրել ու դաստիարակել եք նախնիների սխրանքներով ու պատգամներով տոգորված զավակ, ով ամեն վայրկյան պատրաստ է անձնվիրաբար ծառայել իր ժողովրդին, պաշտպանել հայրենիքը՝ անսասան կերպով տանել զինվորական ծառայության բոլոր դժվարությունները: Զորամասում ծառայում են փառավոր մարտական ուղի անցած, զինվորական բարձրագույն կրթություն ստացած, փորձառու բազմաթիվ սպաներ, ովքեր հետեւողականորեն Արթուրին են հասցնում ռազմարվեստի գաղտնիքները՝ Ձեր որդու նկատմամբ ցուցաբերելով հարգանք եւ հայրական հոգատարություն: Արթուրի կյանքը, առողջությունը պատիվն ու արժանապատվությունը պահպանվում է օրենքով, զինվորականին վայել ձեւով:

Հիմնվելով Ձեր ընտանեկան դաստիարակության վրա զորամասի հրամանատարությունը կանի ամեն ինչ՝ Ձեր որդու կողմից ռազմամասնագիտական գիտելիքների յուրացման, հմտությունների ու կարողությունների ձեռքբերման, Արթուրի մոտ բարոյամարտական գիտելիքների յուրացման, հմտությունների ու կարողությունների ձեռք բերման, Արթուրի մոտ բարոյամարտական վսեմ հատկանիշների ձեւավորման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա պատվով կրել Հայաստանի Հանրապետության պաշտպանի բարձր կոչումը ու բարեխղճորեն կատարել Հայրենիքի հանդեպ իր սահմանադրական պարտքը:

Ձեր որդին աչքի է ընկնում ազնվությամբ, բարեխղճությամբ եւ կարգապահությամբ: Նա բարձր է պահում հայ զինվորի պատիվը, միշտ պատրաստ կատարելու իր քաղաքացիական եւ զինվորական պարտքը:

Դուք, իրավամբ, կարող եք հպարտանալ Ձեր զավակով:

Երախտապարտ ենք Ձեզ նման հայրենասեր որդի դաստիարակելու համար:

ՀՀ ՊՆ N զորամասի հրամանատար: Կնիք: Ստորագրություն:

***P. S. Հպարտության զգացումով եւ առիթից օգտվելով ցանկանում եմ նախապես շնորհավորել մեր բանակին Ամանորի առիթով եւ մաղթել բոլորիս խաղաղ, անամպ երկինք, առողջ, երջանիկ ու արգասաբեր արարումներով հարուստ տարի:***

**ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ**
**պգթ, դոցենտ**

***ԱՆԶԻՄՆ ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ***

# ԵԹՓ-ն հերքում է

***«Երեւանի թռչնաբուծական ֆաբրիկա» ընկերությունից ստացել ենք հետեւյալ հերքումը, որը վերաբերում է «Ժողովուրդ» թերթում լույս տեսած մի նյութի: Տեղեկացնենք նաեւ, որ հերքումը պատշաճ կերպով ներկայացվել է վերոհիշյալ թերթի խմբագրություն, սակայն մինչեւ օրս չի տպագրվել:***

«Ժողովուրդ» թերթի 11.12.12 թ.-ին տպագրած եւ տարածած «Հայտնի օլիգարխին տուգանել են ժամկետանց ձվեր վաճառելու համար» նյութում նշված տեղեկությունները հավաստի չեն, խեղաթյուրված են, չեն բխում իրականությունից եւ նպատակ ունեն արատավորելու մեր ընկերության եւ նրա հիմնադիր Խաչիկ Խաչատրյանի բարի համբավը, պատիվը եւ արժանապատվությունը:

Տեղեկացնում ենք.

Ինչպես նշվում է նյութում, «Ըստ «Ժողովուրդ»-ի տեղեկությունների՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական տեսչությունը վերջերս տուգանել է «X գրուպ»-ի նախագահ, «Ձրաշխարհ»-ի սեփականատեր, «Երեւանի թռչնաբուծական ֆաբրիկա»-ի ղեկավար, «Վալենսիա» ընկերության տնօրեն Խաչիկ Խաչատրյանին: Պատճառն այն է, որ Խաչատրյանին պատկանող ԵԹՓ-ն ժամկետանց հավկիթներ է իրացրել հայկական շուկայում»:

Պաշտոնապես հայտնում ենք, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական տեսչությունը չի տուգանել ո՛չ ԵԹՓ-ին, ո՛չ տնօրենին, առավել եւս ոչ էլ հիմնադիր-բաժնետեր Խաչիկ Խաչատրյանին, քանի որ ըստ ՀՀ օրենսդրության Խաչիկ Խաչատրյանը, հանդիսանալով հիմնադիր, ընկերության գործունեության համար չի կարող տուգանվել:

Հավելենք, որ ԵԹՓ-ն ժամկետանց հավկիթներ չի իրացնում, ուստի չէր կարող տուգանված լինել, եւ «Ժողովուրդ»-ի հրապարակած տեղեկությունը անհիմն է, որին ապացույց ներկայացնում ենք ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական տեսչության կողմից 11.12.2012 թ.-ին արված հայտարարությունը հետեւյալ բովանդակությամբ.

«Գյուղատնտեսական նախարարության սննդի անվտանգության պետական ծառայության պետի մամլո պատասխանատու Բաբկեն Պիպոյանը Aysor.am-ին տեղեկացրեց, որ Սննդի անվտանգության պետական ծառայությունը նման հայտարարություն չի արել: Վերջին շրջանում ձվի շուկայում տուգանքներ չեն եղել,- շեշտեց Բ. Պիպոյանը»:

Տես՝

http://www.aysor.am/am/news/2012/12/11/babken-pipoyan

Ղեկավարվելով ՀՀ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 8-րդ հոդվածով, ստանալով սույն նամակը եւ մեր կողմից պաշտոնապես ներկայացված հիմքերը, պահանջում ենք հերքել Ձեր իսկ կողմից տարածած նյութը եւ ընթերցողներին այլեւս անհիմն եւ ոչ ճիշտ տեղեկատվություն չներկայացնել:

*ԵՐԵՎԱՆԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԱԲՐԻԿԱ*

# Մռայլ հեռանկար Սիրիայի համար

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Մերձավոր Արեւելքում Սիրիան ամենակայուն երկրներից մեկն էր եւ իր արմատներին ու ժառանգությանը նվիրված ամենահարուստ հայկական համայնքի բնակավայրը: 1915 թվի ցեղասպանությունն ու տեղահանությունները ավարտվեցին Հյուսիսային Սիրիայում: Միլիոնավոր մարդիկ մահացան Դեր Զորում, իսկ մազապուրծները ապաստանեցին Հալեպում: Տասնամյակներ շարունակ Հալեպը դաստիարակեց, կրթեց եւ Մերձավոր Արեւելքի (եւ դրանից դուրս գտնվող) հայկական համայնքներին մատակարարեց գրողներ, խմբագիրներ, ուսուցիչներ, ինչպես նաեւ քաղաքական եւ հոգեւոր առաջնորդներ: Դա է պատճառը, որ սիրիահայերին օգնելու աշխարհով մեկ հնչած բոլոր կոչերն ու աղերսները բխում են ոչ միայն մարդասիրական մտահոգություններից, այլեւ մանավանդ այդ մարտնչող համայնքի հանդեպ սփյուռքահայության ցուցաբերած արդարացի երախտագիտությունից:

Տարիներ շարունակ հայկական այդ հպարտ ու նշանավոր համայնքը թուրքերի աչքի փուշն է եղել, հատկապես Սիրիայում իր վայելած հարգանքի եւ ժամանակակից Թուրքիայի սահմանին` Դեր Զորում գտնվող նահատակների հուշարձանի հետեւանքով: Սիրիայից հեռարձակվող լուրերն ու լուսանկարները ցավալիորեն պատկերում են, թե ինչպիսի ավերածությունների են ենթարկվել Դեր Զորի եկեղեցին եւ հուշարձանը Սիրիայի կառավարությունը տապալելու նպատակով Թուրքիայի վարձած հրձիգների կողմից: Այժմ էլ Քեսաբի հայ բնակչությանն են ուղղված սպառնալիքներ` լքելու այդ տարածքը, որտեղ նրանք ապրել են դեռ հռոմեական ժամանակաշրջանից: Քեսաբը նույնպես գտնվում էր 300 տարի տեւած կիլիկյան իշխանությունների եւ թագավորության հարավարեւելյան սահմաններում: Հետեւաբար սիրիական համընդհանուր հակամարտության շրջանակներում Թուրքիան մինի-ցեղասպանություն է ի գործ դնում` փորձելով շարունակել հայերին իրենց բնօրրանում բնաջնջելու իր քաղաքականությունը:

Իհարկե, սա չի մտահոգում կամ անհանգստացնում կատաղիորեն շարունակվող եւ արդեն 40 հազար մարդկանց (այդ թվում` նաեւ հայերի) կյանքը խլած սիրիական պատերազմում ներգրավված կողմերից ոչ մեկին: Նրանցից յուրաքանչյուրը ունի Սիրիան կործանելու իր նպատակները: Այնպես որ, մեր նպատակը պետք է լինի ցույց տալ իրողությունը եւ վարել այնպիսի քաղաքականություն, որ հօգուտ Սիրիայի հայ համայնքի լինի, անկախ այն հանգամանքից, թե այդ քաղաքականությունը համապատասխանում է այդ արյունալի հակամարտությունում ներգրավված կողմերի շահերին, թե ոչ: Ոչ ոք չի կարող արդարացնել, որ նախագահ Բաշար ալ Ասադը եւ իր հայրը` Հաֆեզ Ասադը բռնակալներ են: Բայց հայերն այնտեղ պաշտպանված էին եւ երկու առաջնորդների ժամանակ էլ վայելում էին առանձնաշնորհյալ մի կյանք: Սիրիացի ժողովուրդը նույնպես բարգավաճել է` հակառակ երկիրը տնտեսապես մեկուսացնելու արտաքին բոլոր տեսակի ճնշումների:

Լոնդոնյան «Ինդիփենդենտ» օրաթերթի մերձավորարեւելյան տարածաշրջանի թղթակից Ռոբերտ Ֆիսքի հավաստմամբ` ճակատագրի հեգնանքը այս իրավիճակում այն է, որ մերձավորարեւելյան մի շարք բռնակալներին (սկսած Քաթարի փոքրիկ իշխանությունից եւ վերջացրած Սաուդյան Արաբիայի միջնադարյան միապետությամբ) է հանձնարարված ժողովրդավարություն մտցնել Սիրիայում: Մեկ ուրիշ միջնադարյան միապետություն` հանձին Մարոկկոյի, նույնպես միացել է վերոնշյալներին եւ իր երկրում հյուրընկալել է եւ կազմավորել սիրիական ընդդիմության խմբավորումներին: «Ժողովրդավարության այլ հանձնակատարների» հետ միասին այս կոռումպացված թագավորությունը արդեն վաղուց պայքարում է Արեւմտյան Սահարայի «Պոլիսարիո» ազատագրական ճակատի ուժերի դեմ` փորձելով նրանց պահել իր տիրապետության ներքո:

Սիրիան իր հերթին ամբողջ սառը պատերազմի ժամանակաշրջանում (եւ դրանից հետո) լինելով Արեւելք-Արեւմուտք հակամարտության սխալ կողմում, նաեւ սխալ կողմ էր զբաղեցրել մերձավորարեւելյան քաղաքականության շախմատային տախտակում:

Նախ, Իսրայելի սահմանում արաբական ազգայնականության ամրոցը լինելու հանգամանքով խիստ զայրացրել էր Արեւմուտքին: Այս պատերազմը ժողովրդավարության հետ ոչ մի առնչություն չունի:




Դա ընդամենը մի կանխամտածված ծրագիր է մեկ առ մեկ ոչնչացնելու բոլոր այն վարչակարգերը, որոնք Իսրայելի համար սպառնալիք են համարվում եւ որոշ արաբական վարչակարգերի դարձել են այդ ծրագիր-քաղաքականության գործակիցներ կամ, ավելի ճիշտ, մեղսակիցները:

Սիրիական իշխանությունների մյուս «սխալը» Իրանի հետ դաշնակցելն էր: Իսկ Սիրիան եւ Իրանը համարվում են Ռուսաստանի դաշնակիցը մերօրյա շարունակվող սառը պատերազմում: Ռուսաստանը, անշուշտ, իր շահերն ունի տարածաշրջանում, եւ Ասադի վարչակարգի տապալումը կարող է «դոմինոյի էֆեկտն» ունենալ Իրան-Սիրիա հարաբերությունների վրա, ի վնաս, անշուշտ, Մոսկվայի արտաքին քաղաքականության:

Սիրիական պատերազմը, որն սկսվեց 2011 թվականի մարտին Ասադի վարչակարգի դեմ խաղաղ բողոքի երթերով, քաղաքացիական պատերազմի վերաճեց գլխավորապես արտաքին միջամտության հետեւանքով եւ հանուն օտար շահերի: «Ֆրանսպրես» գործակալության տվյալներով, վերջերս Թուրքիայի սահմանին մոտիկ տեղակայված սիրիական զինվորական բազայի մի մեծ հատված անցել է ընդդիմադիրների ձեռքը: Նրանք գրավել են այդ տարածքը եւ ամրապնդել իրենց դիրքերը: Իսկ Էլադ Բենարին ցնցող բացահայտում է կատարել «Իսրայել նեշընլ նյուզ» պարբերականում գրելով. «Ընդդիմադիր մարտնչողներից շատերը սիրիացիներ չեն, եւ առաջնորդներից մեկը, որն իրեն Աբու Թալիա է անվանել, ասել է, որ Ուզբեկստանից է»:

Քաղաքական որեւէ մեկնաբան պետք է չափից ավելի վառ երեւակայություն ունենա պատկերացնելու համար, որ սիրիացի ժողովուրդը երբեւէ կարող էր իր ժողովրդավարության ձգտումները կապել Ուզբեկստանից եկած ինչ-որ մի ավազակի հետ:

Պարզ է, որ Արեւմուտքն օգտագործում է այս ծայրահեղական խմբավորումներին իրականացնելու համար կարճաժամկետ իր ծրագրերը` չանդրադառնալով, որ հետագայում նրանք դառնալու են սպառնալիքներ իր իսկ անվտանգության համար: Ուսամա բեն Լադենին Մ. Նահանգները զինեց «Stringer» տիպի ուսակիր հրթիռներով` Աֆղանստանում սովետական «Միկերը» ցած բերելու համար: Հետագայում բեն Լադենը Նյու Յորքում «ցած բերեց» Համաշխարհային առեւտրի կենտրոնը:

Այս խմբավորումները մեկից ավելի անգամներ ապացուցել են, որ նրանք «անկախ ու սանձարձակ հրանոթներ» են, որոնք նվիրված են իրենց սեփական ծայրահեղական գաղափարախոսությանը եւ կարող են վնասել քաղաքակրթված հասարակություններին:

Սիրիական հակամարտությունը դուրս է եկել արդեն մերձավորարեւելյան իր սահմաններից եւ դարձել միջազգային հակամարտություն Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, որտեղ Մ. Նահանգներն ու Եվրոմիությունը պահանջում են վարչակարգի փոփոխություն Սիրիայում, իսկ Ռուսաստանն ու Չինաստանը ՄԱԿ-ի ամբիոնից դատապարտում են արտաքին միջամտությունը Սիրիայում:

Նախագահ Վլադիմիր Պուտինի եւ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի, ինչպես նաեւ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի եւ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի միջեւ վերջերս կայացած հանդիպումները չկարողացան ելք գտնել ստեղծված անելանելի դրությունից:

Ռուս պաշտոնատար անձինք բազմիցս կրկնել են, որ Մոսկվան չի պնդում, որ Ասադը մնա իշխանության ղեկին, բայց նրա ճակատագիրը չպետք է օտար կառավարությունները ու արտաքին ուժերը որոշեն (ներառյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը): Պուտինի խոսնակ Դմիտրի Պեսկովը մասնավորապես նշել է. «Անկարայում, Լոնդոնում կամ Քաթարում նստած մենք չենք կարող ասել, որ Ասադը պետք է հեռանա: Դա չի կարող լինել: Տրամաբանական չէ: Նման որոշումները կարող են միայն է՛լ ավելի վատթարացնել իրավիճակը»: Դուբլին այցելելով` Մ. Նահանգների պետքարտուղարը ռուսական դիրքորոշմանը հակադրվեց` քննադատելով Ռուսաստանի ներքին խնդիրները, ոչ մի բառ չասելով սիրիական ճգնաժամի մասին: Վերջին ժամանակների իր հայտարարություններում նա ավելի շատ նմանվում է անցյալի սառը պատերազմի վետերանի: Բայց չի բացառվում, որ նա այդ օրակարգով իր քաղաքականություն վերադարձն է նախանշում 2016-ի նախագահական ընտրություններում:

Նախքան Լավրովի հետ հանդիպումը Քլինթոնն իր ասելիքը նկարագրել էր, ասելով, որ «հակվածություն է նկատվում էլ ավելի սահմանափակելու Ռուսաստանի, Բելառուսի, Թուրքմենստանի եւ երկու տասնյակ առաջ Խորհրդային Միության փլուզումից հետո առաջացած մյուս երկրների քաղաքացիների ազատությունները»: «Նկատվում է շարժում տարածաշրջանը վերախորհրդայնացնելու: Այդպես չի կոչվելու, իհարկե: Կոչվելու է «Մաքսային միություն» կամ «Եվրասիական միություն» եւ այլն: Բայց եկեք չսխալվենք: Մենք գիտենք դրա վերջնական նպատակը եւ փորձում ենք արդյունավետ միջոցներ որոնել դանդաղեցնելու կամ ընդհանրապես թույլ չտալու նման գործընթաց», ասել էր նա` արձագանքելով տարածաշրջանում ավելի լայն ինտեգրման Ռուսաստանի ջանքերին:

Հայաստանը, Քլինթոնի վերոնշյալ խոսքերում, մտնում է «մյուս երկրների» մեջ, որոնք առաջ եկան Խորհրդային Միության փլուզումից հետո: Եվ Մոսկվան կարծես այդ «մյուս երկրի» թեւն է ոլորում, որ միանա Եվրասիական այդ միությանը: Հետեւաբար, ինչ արտաքին քաղաքականություն էլ որդեգրի Հայաստանը, ընկալվելու է, որ նա մնում է Ռուսաստանի ազդեցությունների ոլորտում:

Եվ սա հայերին տանջող շատ հարցերի պատասխանն է. ինչո՞ւ Օբաման «ցեղասպանություն» բառը չի օգտագործում: Ինչո՞ւ պետքարտուղարությունը չի քննադատում Ադրբեջանին Ջուղայի հայկական հուշարձանները ոչնչացնելու համար: Ինչո՞ւ չի լուծվում Ղարաբաղի հակամարտությունը: Ինչո՞ւ Վաշինգտոնը Թուրքիայից չի պահանջում վերջ տալ Հայաստանի շրջափակումը: Եվ վերջապես ինչո՞ւ է Հայաստանին տրամադրվող ամերիկյան օժանդակությունը գնալով նվազում:

Այս բոլոր հարցերի պատասխանները վերստին ուրվագծվող սառը պատերազմի կոնտեքստում պետք է փնտրել:

Վերադառնալով Սիրիայի խնդրին, որն էլ պատճառ դարձավ վերոնշյալ գլոբալ քննարկումներին, պետք է ասել, որ երկու գլխավոր հեռանկար է ակնհայտորեն սպասվում: Առաջին` ինչ ելք էլ ունենա հակամարտությունը, սիրիահայ աշխույժ համայնքն այլեւս նույնը չի լինելու: Երկրորդ` «արաբական գարուն» (կամ մղձավանջ) կոչվող այս քաղաքականությունը, որին մաս է կազմում Սիրիայի ներկա, արհեստականորեն ստեղծված հակամարտությունը, կարծես իր նպատակին հասնում է, որովհետեւ համեմատաբար (բացի արջի ծառայություն մատուցելու ձեւաչափով) քիչ է խոսվում պաղեստինյան ժողովրդի եւ իսրայելա-պաղեստինյան հակամարտության մասին:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ.` Հ. Ծ.**

# Միլիարդատերը գնում է Բաքու, բայց «Կարս-Ախալքալաք»-ը չի քննարկելու

Կարս-Ախալքալաք երկաթգծի կառուցումը հարցականի տակ դնելու մասին Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլու հայտարարությունը, որ «**Ազգը**» ներկայացրել է նախորդ համարում, զարգացումներ է ունենում, ընդ որում` ոչ միայն ակնկալվող ադրբեջանական կողմից, այլեւ` հենց վրացական:

Վրացական «Ռեզոնանսի» թերթին տված հարցազրույցում արված Իվանիշվիլու հայտարարությունը, թե այդ երկաթգծի շինարարությունը Վրաստանի նոր իշխանությունների մոտ հարցադրումներ է առաջացրել, ավելին, թե հնարավոր է անհրաժեշտ լինի Ադրբեջանին բացատրել երկաթգծի շինարարության` որոշակի փուլում Վրաստանի համար շահավետ չլինելու հանգամանքը, ամենայն հավանականությամբ, քննարկման թեմա կդառնա հենց վաղը:

Բանն այն է, որ Իվանիշվիլու տեղեկացմամբ հենց վաղն էլ նա այցելելու է Ադրբեջան ու հանդիպելու երկրի ղեկավարության հետ: Ու ինչպես նույն հարցազրույցում նշել էր Վրաստանի վարչապետը, Ադրբեջան այցելությանը հետ չի լինելու բացատրել իր մտահոգությունները, քանի որ երկաթգծի շինարարության գործը ընթացքի մեջ է: Ավելին, Իվանիշվիլին չէր մոռացել հիշատակել Ադրբեջանի հետ պարտավորությունները հարգելու կարեւորության մասին, միեւնույն ժամանակ նշելով, թե «գոյություն ունեն հարցեր եւ դրանց պետք է պատասխաններ տրվեն»:

Ադրբեջանը երկրորդ երկիրն է, ուր հոկտեմբերի խորհրդարանական ընտրությունների արդյունքում վարչապետ դարձած Իվանիշվիլին կայցելի` Բրյուսել այցելությունից հետո: 2013-ի հունվարին էլ, ի դեպ, նախատեսվում է միլիարդատեր վարչապետի այցելությունը Հայաստան: Թե օրակարգում ինչ հարցեր են լինելու` չի նշվում, ամեն դեպքում, Հայաստան այցելությանը, ըստ նույն աղբյուրի, կհետեւի այցը Թուրքիա, իսկ արդեն գարնանը` Միացյալ Նահանգներ:

Սակայն մինչ այդ, Բաքու մեկնելու նախօրեին Իվանիշվիլին հայտարարել է, թե Վրաստանը չի ծրագրում դադարեցնել Կարս-Ախալքալաք երկաթգծի շինարարությունը, սակայն մտահոգություններ կան, որ այդ ճյուղի գործարկմամբ արդեն իսկ գործող մյուս ուղղություններով, նաեւ վրացական նավահանգիստներում բեռնափոխադրումները կնվազեն: Ամեն դեպքում, նախորդ հայտարարությունից շատ չանցած` երեկվա հայտարարությամբ Իվանիշվիլին տեղեկացրել է, թե Բաքու այցելությանը երկաթգծի հարցը չի քննարկելու, քանի որ «այդ հարցի ուղղությամբ խմբեր են աշխատում, եւ դա բավարար է: Ես մտադիր չեմ հարցը Ադրբեջան այցելության ընթացքում քննարկել»:

Բաքվից էլ անարձագանք չեն թողել Իվանիշվիլու հայտարարությունը երկաթգծի առնչությամբ: Մասնավորապես, իշխող «Ենի Ազերբայջան» կուսակցության գործադիր քարտուղարի տեղակալ Մուբարիզ Գուրբանլին նշել է, թե Իվանիշվիլու` «ադրբեջանա-վրացական ռազմավարական հարաբերությունների շրջանակներից դուրս գալու դեպքում կտուժեն, առաջին հերթին, Վրաստանն ու վրաց ժողովուրդը»:

«Մնում է հուսալ, որ այդ հայտարարությունների հետեւում լրացուցիչ արտոնություններ ստանալու ցանկությունն է, քանի որ այդ ճանապարհը ավելի ձեռնտու է Վրաստանին, քան Ադրբեջանին», ասել է Գուրբանլին, հավելելով, թե Վրաստան-Ադրբեջան ռազմավարական հարաբերություններն, ամենից առաջ, ձեռնտու են վրաց ժողովրդին: (Բավականին ծանոթ դիրքորոշում էր, այն տարբերությամբ, որ նման «առատաձեռնություն» մատուցում է Վրաստանը` Հայաստանի առնչությամբ, այս անգամ` Լարսով անցնող ցամաքային ավտոմայրուղու առնչությամբ):

Թե ինչ արդյունքներ կարձանագրեն Իվանիշվիլու այցելությունները Բաքու, ապա` Երեւան, Անկարա եւ Վաշինգտոն, դեռ կտեսնենք, բայց ներկա դրությամբ ակնհայտ է, որ Վրաստանի դեռեւս նախագահ Միխեիլ Սաակաշվիլու նախորդ ձեռնարկումները չեն ողջունվում:

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

# Եգիպտոսում կվիճարկվեն հանրաքվեի արդյունքները

*Իսլամիստները քարկոծել են դատավորին*

Եգիպտոսի ընդդիմադիր Ազգային փրկության ճակատի ներկայացուցիչները հայտարարել են, որ մտադիր են բողոքարկել շաբաթ օրն անցկացված նոր սահմանադրության հանրաքվեի արդյունքները: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Շարժման ներկայացուցիչների խոսքերով, հանրաքվեի ժամանակ արձանագրվել են բազմաթիվ խախտումներ, իսկ քվեարկության արդյունքները կեղծվել են: Ընդդիմադիրները ընտրական հանձնաժողովից պահանջել են պաշտոնական արդյունքների հրապարակումից առաջ քննել խախտումների դեպքերը:

«Հանրաքվեն վերջը չէ, դա միայն հերթական ճակատամարտն է», հայտարարել է Ազգային փրկության ճակատի ներկայացուցիչներից մեկը:

Նաեւ հաղորդվում է, որ Կահիրեում երեկ հարձակում է կատարվել դատավորների գերագույն կոլեգիայի նախագահ Ահմեդ Զանդի վրա: Տեղական լրատվամիջոցների տվյալներով` նրան քարկոծել են իսլամիստները: Զանդը աննշան վնասվածքներ է ստացել: Ոստիկանությանը հաջողվել է ձերբակալել 15 հարձակվողներից միայն 3-ին:



Հարձակման առիթը Զանդի հուզական ելույթն էր, որի ընթացքում նա քննադատել էր սահմանադրության հանրաքվեն: Գերագույն կոլեգիայի նախագահին ասել էր, որ դատավորները Եգիպտոսում դեռ երբեք այդքան չէին նվաստացվել: Նախագահ Մուրսիի կողմնակից իսլամիստները պնդում են, թե սահմանադրության նախագծին հավանություն է տվել բնակչության մեծ մասը: Ընդդիմությունը քննադատում է փաստաթուղթը, որը հիմնված է շարիաթի օրենքների վրա:

Դեկտեմբերի 22-ին անցկացված հանրաքվեի 2-րդ փուլի քվեների մի մասի մշակումը ցույց է տալիս, որ փաստաթղթին հավանություն է տվել ընտրողների մոտ 64 տոկոսը:

«Մուսուլման եղբայրների» կողմնակիցների մշակած նոր սահմանադրության նախագիծը սահմանափակում է քաղաքացիական իրավունքները ի հաշիվ «կրոնական ու բարոյական նորմերի» եւ ոտնահարում է քրիստոնյաների ու կանանց իրավունքները, քանի որ հիմնված է շարիաթի նորմերի վրա: Նոր սահմանադրության կողմնակիցները իրենց հերթին պնդում են, թե դրա ընդունումը վերջ կդնի երկրի անկայունությանը:

Դեկտեմբերի 22-ին` հանրաքվեի ավարտից առաջ, հրաժարական էր տվել Եգիպտոսի փոխնախագահ Մահմուդ Մեքքին: Նա իր քայլը պատճառաբանել էր այն բանով, որ քաղաքական գործունեությունը չի համատեղվում անցյալում նրա կատարած դատավորական աշխատանքի հետ: Բացի դրանից, նույն օրվա երեկոյան նախագահ Մուհամմեդ Մուրսին հայտարարել էր խորհրդարանի վերին պալատի 270 անդամների մեջ իր նշանակած 90 անձանց անունները: Այդ ցանկում տեղերի 1/4-ը զբաղեցնում են իսլամիստները: Ավելի վաղ խորհրդարանի 180 տեղեր բաշխվել էին համաժողովրդական քվեարկությամբ: 105 բաժին էր ընկել իսլամիստական կուսակցությունների ներկայացուցիչներին:



# «Ալ Ջազիրան» պնդում է, թե Սիրիայում քիմիական զենք է օգտագործվել

*Պնդումն արվում է Բրահիմիի այցի նախօրեին*



Քաթարյան «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը երեկ այն պնդումն արեց, թե Սիրիայի կառավարական զորքերը Հոմսում օգտագործել են թունավոր գազ, որի հետեւանքով զոհվել է 6 մարդ, մի քանիսն էլ տուժել են: Սիրիացի ընդդիմադիրները պնդում են, թե նախագահ Ասադի օդուժը օգտագործում է գազ պարունակող ռումբեր:

«Ալ Ջազիրայի» տվյալներով, այդ զենքը կիրառվել է Ալ Հալիդիա եւ Բայադա շրջաններում: Տուժածների ընդհանուր թիվն անցնում է 60-ից, մի քանի մարդ կուրացել է, մի քանիսն էլ անդամալույծ է եղել:

«Քոլ Իսրայել» ռադիոկայանը իր հերթին հաղորդում է, որ նախօրեին Իրանի վարչակարգի եւ լիբանանյան «Հզբոլլահ» արմատական կազմակերպության հետ կապված կայքէջերը սիրիացի ապստամբներին մեղադրել էին քիմիական զենքի օգտագործման մեջ, որի հետեւանքով սպանվել էին կառավարական զորքերի մի քանի զինվորներ:

Արեւմուտքի պետությունները Սիրիայի նախագահ Բաշար Ասադին քանիցս նախազգուշացրել են, որ քիմիական զենքի օգտագործումը առիթ կդառնա քաղաքացիական պատերազմին արտաքին միջամտության համար: Անցյալ շաբաթ ՄԱԿ-ում Սիրիայի դեսպան Բաշար Ջաֆարին կազմակերպության գլխավոր քարտուղար Բան Կի Մունին գրել էր, որ պաշտոնական Դամասկոսը վախենում է սադրանքից, որի շրջանակներում ընդդիմությունը քիմիական զենք կօգտագործի եւ դրանում կմեղադրի վարչակարգին:

Ի դեպ, գազերի կիրառման վերաբերյալ հաղորդումները տարածվեցին ՄԱԿ-ի հատուկ բանագնաց Լախդար Բրահիմիի Դամասկոս կատարելիք այցի նախօրեին:

Սիրիայում ներկայումս քննում են Հալֆայա քաղաքում տեղի ունեցած ողբերգությունը, որտեղ պայթյունի հետեւանքով զոհվեցին եւ վիրավորվեցին, զանազան աղբյուրների համաձայն, 60-ից մինչեւ 200 անձինք: Մինչեւ օրս պարզ չէ, թե հատկապես ով է կազմակերպել այդ պայթյունը, նշում է «Ռոսիա 24» հեռուստաալիքը: Ընդդիմությունը իշխանություններին մեղադրում է, թե երկրի օդուժը հարված է հասցրել այդ քաղաքի հացի խանութներից մեկին: Զոհերը հիմնականում այն մարդիկ են, ովքեր հացի հերթ էին կանգնել: Առայժմ անհնար է դա ստուգել, քանի որ քաղաքը ընդդիմադիրների` «Սիրիական ազատ բանակի» վերահսկողության տակ է: Վերջին տեղեկությունների համաձայն, կառավարական զորքերը գործողություն են իրականացնում Դամասկոսի մոտակայքում: Պաշտոնական մամուլի տվյալներով, գրոհայինները զանգվածաբար գերի են հանձնվում:

# Նախագահ Գյուլի եւ վարչապետ Էրդողանի Սուրբ Ծննդյան ուղերձը քրիստոնյա քաղաքացիներին

Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլն ու վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ամանորյա տոների առթիվ ուղերձով շնորհավորել են երկրի քրիստոնյա քաղաքացիներին: Ուղերձում, ինչպես դեկտեմբերի 23-ին վկայել է CNN-Turk-ը, նախագահ Գյուլը քրիստոնյաների Ամանորն ու Սուրբ Ծնունդը շնորհավորելիս, նշել է, որ Թուրքիայում, անկախ կրոնից եւ դավանանքից, բոլոր քաղաքացիները բարեկամության, համերաշխության, փոխադարձ հարգանքի եւ սիրո հենքի վրա ապրում են եղբայրաբար: Նա Ամանորն ու Սուրբ Ծնունդը համարել է ընդհանուր արժեք «քաղաքակրթությունների օրրան» Անատոլիայում, ընդգծել է, որ դա ամրապնդում է երկրում ազգային միասնության եւ համատեղ գոյակցության սկզբունքը:

Այնուհետեւ Աբդուլլահ Գյուլը շարունակել է. «Անկասկած, այս արժեքները, որոնք անպայման կփոխանցվեն ապագա սերունդներին, մեր համատեղ ժառանգությունն են: Այս առթիվ մեկ անգամ եւս շնորհավորում եմ քրիստոնյա մեր քաղաքացիների, ինչպես նաեւ քրիստոնեական ողջ աշխարհի Ամանորն ու Սուրբ Ծնունդը»:

Նախագահ Գյուլի օրինակին հետեւել է վարչապետ Էրդողանը, մասնավորապես ասելով. «Մենք տարբեր կրոնների եւ մշակույթների նկատմամբ հարգանքը արժանիք համարող, տարբերությունները որպես հարստություն դիտարկող արմատավորված ավանդույթի ներկայացուցիչներն ենք: Համոզված եմ, որ այս ավանդույթին համապատասխան, տարբեր կրոնների եւ մշակույթների հանդեպ հարգանքի մթնոլորտում խաղաղ գոյակցությամբ կշարունակվի դրսեւորվել համատեղ ապագան միասին կերտելու մեր բոլորի վճռականությունը: Այս զգացումով Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ շնորհավորում եմ մեր երկրի բոլոր քրիստոնյաներին: Ցանկանում եմ նրանց խաղաղություն, առողջություն եւ երջանկություն»:

Հ. Չ.

ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ՁԳՁԳՈՒՄՆԵՐ

# Ֆրանսիայի Հայկական թանգարանի ճակատագրի մտահոգությամբ

**Արտերկրում գտնվող հայկական մշակութային-կրթական յուրաքանչյուր հաստատություն որպես համասփյուռքյան օրգանիզմի անբաժանելի մաս, իր դերն ու նշանակությունը եւ ազդեցությունը ունի ամբողջ կառույցի վրա: Եվ, բնականաբար, դրանց հետ կապված որեւէ փոփոխություն, աշխատանքների դադարեցում, փակում եւ այլն ակնհայտորեն թուլացնում են հայկական ինքնության պատնեշները, հուսահատական տրամադրություններ առաջացնում հայության մեջ: Նման ցավալի իրողություն ապրեց սփյուռքահայությունը վերջերս Կիպրոսի Մելքոնյան վարժարանի փակման հետ կապված:**

**Այսպիսի մի ճակատագիր, կարծես, սպասվում է Ֆրանսիայի Հայկական թանգարանին: 1949 թ. Նուբհար Ֆրենկյանի կողմից հիմնադրված թանգարանը գտնվում է Փարիզի լավագույն հատվածներից՝ 16-րդ թաղամասում, զբաղեցնելով XIX դարի պատմական, գեղեցիկ մի շինության՝ երեք հարկանի առանձնատան առաջին հարկը: Չնայած մասնավոր թանգարանային կարգավիճակին՝ հավաքածուն պատկանում է Ֆրանսիայի պետությանը: Շուրջ հազար միավոր իրերից բաղկացած թանգարանային հավաքածոյի մեջ հատկապես արժեքավոր են հին ձեռագրերն ու հնատիպ գրքերը, նախաուրարտական եւ ուրարտական շրջանին պատկանող հնարժեք իրեր, եկեղեցական սպասք եւ ծիսական իրեր, Քյոթահիայի խեցեգործության ընտիր նմուշներ, XIX-XX դարերի հայ գեղանկարիչների արժեքավոր գործեր եւ այլն: Թանգարանը իր տեսակով Ֆրանսիայում միակն է եւ շատ կարեւոր՝ հայության համար, քանի որ հայ մշակույթի պատմության անձնագիր է ասես, եւ այդ պատմության բոլոր փուլերի բազմաշերտության ու բազմազանության ներկայությունն է ապահովում եվրոպական կարեւորագույն երկրներից մեկում:**

**Թանգարանային շենքը հնացածության, համապատասխան պայմանների, միջավայրի՝ միջազգային ժամանակակից նորմերին չհամապատասխանելու պատճառով 1993-ականներից փակված է: Փակվել է նաեւ նույն շենքի 2-րդ հարկում գտնվող Էնրիի թանգարանը, որը Մերձավոր եւ Հեռավոր Արեւելքի արվեստի «Գիյմե» թանգարանին պատկանող, բայց առանձին պահպանվող հավաքածու է՝ XIX դարի ֆրանսիացի դիվանագետ եւ հավաքածոյի հեղինակ Էնրիի անվան թանգարանում: 2011 թ. վերանորոգչական աշխատանքներ ձեռնարկած Էնրիի թանգարանը Հայկական թանգարանին խնդրեց ազատել զբաղեցրած տարածքը՝ իր իսկ անվտանգության շահերից ելնելով: Միաժամանակ Ֆրանսիայի մշակույթի նախարարությունից թանգարանի տնօրեն, հիմնադրի որդի Ֆրեդերիկ Ֆրենկյանին վերանորոգման աշխատանքներն ավարտվելուց հետո վերադառնալու եւ իր սրահները հետ ստանալու փաստաթուղթ տրվեց: Ըստ այդու, թանգարանային հավաքածուն փաթեթավորվեց եւ պահեստավորվեց: Ցուցանմուշների մեկ մաս մասնակցեց 2012 թ. փետրվարի 1-ից Արվանշում բացված «Հայկական ներկայությունը Ֆրանսիայում» ցուցահանդեսին: Երբ Արվանշի ցուցահանդեսը մայիսին փակվեց, եւ Էնրիի թանգարանի վերանորոգման աշխատանքները ապրիլից արդեն ավարտվել էին, որոշվեց Հայկական թանգարանային հավաքածուն նույնությամբ տեղափոխել նախկին սրահները: Չնայած աշխատանքներն ավարտված էին, սակայն Հայկական թանգարանի սրահները զբաղեցված էին ռեստավրացիայի ենթակա Էնրիի թանգարանի իրերով, ինչն անհրականանալի է դարձնում Հայկականի մուտքը արդեն յոթ ամիս: Ֆրեդերիկ Ֆրենկյանի բազմաթիվ դիմումները մշակույթի նախարարություն, առայժմ անարդյունավետ են. չնայած առկա փաստաթղթին, նա չի կարողանում հետ ստանալ իր տարածքը՝ յուրաքանչյուր անգամ տարբեր պատճառաբանություններով՝ սպասելու, հետաձգելու եւ այլն խնդրանքով: Երբեմն նամակները մնում են անպատասխան:**

**Թանգարանի աշխատանքները՝ հավաքածոյի գիտական կատալոգի պատրաստման, հրատարակության եւ այլ, փաստորեն կաթվածահար են: Այսպիսի վիճակը եւ նման վերաբերմունքը մռայլ կանխատեսումների է մղում: Ֆրանսիայի Հայկական թանգարանի ճակատագիրը անհանգստություն է պատճառում նաեւ Հայաստանի մտավորական շրջանակներին: Այս մտահոգությամբ էր «Ազգի» խմբագրություն անցել թանգարանի հետ երկար տարիներ աշխատանքային համագործակցության մեջ գտնվող, նույն թանգարանի կատալոգի հեղինակ, արվեստաբան-ձեռագրագետ, Երեւանի Մատենադարանի ավագ գիտաշխատող Էդդա Վարդանյանը, որի հետ մեր զրույցի մանրամասները՝ թերթի հաջորդ տարվա առաջիկա համարներից մեկում:**

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Ժամանակների համակեցություն

*Ցուցահանդես Մանկավարժականի 90-ամյակի առթիվ*

Մանկավարժական համալսարանի հիմնադրման 90-ամյակին նվիրված ցուցահանդես բացվեց Հայաստանի նկարիչների միությունում:

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստի ֆակուլտետի դասախոսների, շրջանավարտների եւ ուսանողների աշխատանքները ցուցադրված էին բոլոր ցուցասրահներում:

Միջոցառմանը ներկա էին բուհի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը, ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, Ազգային պատկերասրահի տնօրեն, ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր Փարավոն Միրզոյանը, վաստակավոր նկարիչ Լեւոն Կոջոյանը եւ այլք:



ԿԳ նախարար **Արմեն Աշոտյանը** բացման խոսքում ասաց. «Գաղտնիք չէ, որ մենք շատ ենք խոսում գիտելիքի կարեւորության եւ գիտելիքահեն հասարակություն ստեղծելու մասին: Մշակույթը եւ կրթությունը նույն շքանշանի երկու երեսներն են: Դժվար է բաժանել մշակույթը եւ կրթությունը, գիտելիքը եւ արժեքը: Մեկը մյուսով է ապրում եւ ստանում իր երկրորդ շունչը: Ուրախալի է, որ կրթական հաստատություններից մեկը՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, մեզ է հրամցնում այսօր նման ցուցանդես, որը գոհարն է ամբողջ հոբելյանական միջոցառումների, որոնք մեկնարկել էին տարեսկզբին»:

«**Ազգը**» զրուցեց Կերպարվեստի ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի դաշնության կրթության ակադեմիայի ակադեմիկոս **Լեմս Ներսիսյանի** հետ. «Որպես կրթօջախ մենք ունեցել ենք մեր նպատակադրումները, բայց եւ այնպես այստեղ աշխատել են պրոֆեսիոնալ նկարիչներ, որոնք ենթարկվել են այդ նպատակներին: Նրանց սերունդներն այժմ շարունակում են իրենց առաջադրած նպատակները: Այսօրվա շուկայական հարաբերությունները պահանջում են ոչ միայն դպրոցի համար մանկավարժ պատրաստել, այլեւ ստեղծագործող նկարիչ: Կան ծրագրերի մի շարք փոփոխություններ: Ես՝ որպես Կերպարվեստի ամբիոնի վարիչ, առաջադրում եմ հատուկ ծրագրեր. բացի մանկավարժ-նկարչից, պատրաստում ենք պրոֆեսիոնալ նկարիչներ»:

Նշենք, որ միջոցառումը համընկել էր նաեւ նկարչական բաժնի հիմնադրման 50 -ամյակի հետ: Ցուցադրվեցին նաեւ այդ բաժնի հիմնադիր, հանրապետությունում լայն ճանաչում ունեցող նկարիչ-մասնագետներ՝ Լեմս Ներսիսյանի, Կարապետ Մինասյանի, Հովհաննես Զարդարյանի, Ղուկաս Չուբարյանի, Էդուարդ Իսաբեկյանի, Հովհաննես Հարությունյանի, Վահրամ Խաչիկյանի, Սուրեն Սաֆարյանի, Տիգրան Սիմոնյանի աշխատանքները: Հայաստանի Նկարիչների միության առաջին հարկի ցուցասրահում անվանի վարպետների աշխատանքներից զատ, ներկայացված էին նաեւ գործող դասախոսների կտավները, իսկ երկրորդ հարկում ցուցադրված էին Մանկավարժական համալսարանի շրջանավարտների եւ ուսանողների գործերը:

Ցուցահանդեսում ներկայացված էր ընդհանուր առմամբ մոտ 300 աշխատանք՝ գեղանկար, գրաֆիկա, քանդակ, գոբելեն, դեկորատիվ կիրառական արվեստի, հագուստի մոդելավորման, դիզայնի, խեցեգործության նմուշներ, փայտյա իրեր եւ մետաղյա զարդեր:

Այսօր երիտասարդ նկարիչների կողքին Մանկավարժական համալսարանում աշխատում են ժողովրդական նկարիչ Զախար Խաչատրյանը եւ վաստակավոր նկարիչ Լեւոն Կոջոյանը, որոնց աշխատանքները եւս ցուցադրվեցին:

Ցուցահանդեսը կշարունակվի մինչեւ դեկտեմբերի 27-ը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# «Web Ծիրանն» ամփոփեց այս տարվա մրցույթի արդյունքները

*Համահայկական առցանց երկրորդ կինոփառատոնի հաղթողները ստացան իրենց մրցանակները*

Մեկ ամիս առաջ ՎիվաՍել-ՄՏՍ-ի հովանավորությամբ մեկնարկած «Web Ծիրան» առցանց կինոփառատոնին ներկայացվել էր 15 խաղարկային եւ վավերագրական ֆիլմ: Այսօր ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակում կայացավ մրցանակաբաշխության արարողությունը՝ ընկերության գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանի**, «Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային կինոփառատոնի տնօրեն **Հարություն Խաչատրյանի** եւ Webtv.am ինտերնետ-հեռուստատեսության տնօրեն **Արայիկ Մանուկյանի** համատեղ մամուլի ասուլիսից հետո:

Ժյուրին, որի կազմում ընդգրկված էին արձակագիր Արմեն Օհանյանը, սցենարիստ Համբարձում Համբարձումյանը, արվեստաբան Սեդա Շեկոյանը, կինոքննադատներ Դավիթ Վարդազարյանը եւ Րաֆֆի Մովսիսյանը, հայտարարեց հաղթողների անունները: Նախապես սահմանված էր 3 մրցանակ:

Ժյուրիի որոշմամբ, գլխավոր մրցանակին արժանացավ **Վարդան Դանիելյանի «Էսքիզներ Ոսկեվազի դաշտերից»** վավերագրական ֆիլմը՝ դասական վավերագրության կանոններով իրականության գեղարվեստական վերապատման համար: Երկրորդ մրցանակին արժանացավ **Աշոտ Հովսեփյանի «Մորուք»** վավերագրական ֆիլմը՝ սոցիալական ծանր պայմաններում ապրող մարդու լուսավոր կերպարի բացահայտման համար: 3-րդ մրցանակը կիսվեց **Անդրանիկ Հարությունյանի «Զակաս»** խաղարկային եւ **Սամվել Սեյրանյանի «Հայ տարեցը»** վավերագրական ֆիլմերի միջեւ:

Ամենաշատ դիտումների արժանացած՝ **Արշակ Զաքարյանի «Կինը»** ֆիլմն արժանանացավ «Համակրանք» խրախուսական մրցանակի եւ հատուկ դիպլոմի:

«Մարդկային երեւակայությունն անսահմանափակ է՝ ժամանակակից աշխարհում ինքնադրսեւորվելու համար: Կինոարտադրությունը լսարանին հասանելի դարձնելու առցանց տարբերակը ե՛ւ սկսնակների, ե՛ւ մասնագետների համար այլընտրանքային հրաշալի գործիք է՝ նվազագույն ռեսուրսներով առավելագույն հաջողության հասնելու առումով: Համացանցն այդ գործընթացը սպասարկող միջոց է: Տեխնոլոգիաների դարաշրջանը հնարավորությունների նոր շեմ է սահմանել բոլորի համար»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

**ԱԶԳ**

**Հայաստանի Գրողների Միությունը եւ Երեւանի Խ. Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի «Սփյուռք» Գիտաուսումնական Կենտրոնը Դեկտեմբերի 27-ին, ժամը 13.00-ին հրավիրում են ՀԳՄ դահլիճ՝ ականավոր արձակագիր, «Սփյուռք» պարբերականի նշանավոր խմբագիր Գեւորգ Աճեմյանի «Գեղարվեստական երկեր» երկհատորյակի շնորհանդեսին:**

***Հասցեն՝ Երեւան, Բաղրամյան 3***

**ՇՆՈՐՀԱՆԴԵՍ**

**Դեկտեմբերի 25-ին, ժամը 12-ին «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության գրասենյակում (Արգիշտի 4/1) տեղի կունենա «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության աջակցությամբ մշակված հանրակրթական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգերի շնորհանդեսը, որին կմասնակցեն ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը եւ «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

# Sympho+Jazz=Christmas

Հայաստանի պետական երիտասարդական եւ ջազ նվագախմբերը Սբ. Ծննդյան եւ Նոր տարվա տոների առիթով անակնկալ համերգային ծրագրով են հանդես գալիս՝ Sympho+Jazz=Christmas:

Այս համերգին միաձուլվել են ջազն ու դասականը, արդյունքում ստացվել է հետաքրքրական համերգ: Ուրախալի է, որ մեր ստեղծագործական խմբերը չեն սահմանափակվում եղածով, այլեւ նորանոր հետաքրքրական նախաձեռնություններով են հանդես գալիս՝ կրթելով ունկնդրին:

Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր **Սերգեյ Սմբատյանը** Sympho+Jazz=Christmas ամանորյա համերգը տոն է համարում. «Դեկտեմբերի 25-ին կլսեք աննախադեպ համերգ, չնայած այժմ համերգների 90 տոկոսին նման որակում են տալիս, բայց առանց հիմքի ես նման բան չէի ասի: Ի դեպ, այս համերգը կունենա իր տրամաբանական շարունակությունը»:

Հայաստանի պետական ջազ նվագախմբի գեղարվեստական ղեկավար **Արմեն Հյուսնունցն** էլ իր հերթին նշեց, որ համագործակցության ցանկությունը եւ գաղափարը վաղուց կար, եւ շնորհիվ Վահագն Հայրապետյանի, գաղափարը իրականություն դարձավ, «Հուսամ, համագործակցությունը շարունակական բնույթ կկրի,- ասաց նա:- Ես աշխատում եմ այնպիսի երաժիշտների հետ, որոնք լի են արկածախնդրությամբ եւ էնտուզիազմով, որոնք չեն վախենում ժանրային փոփոխություններից»:

Բանախոսները չբացեցին չակերտները եւ չասացին, թե ինչ է հնչելու համերգին:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# 2013-ին «կփորձարկվի» բասկետբոլի տղամարդկանց ազգային ընտրանին

***Նա բաց չի թողնում եւ ոչ մի մարզական կամ երիտասարդական միջոցառում: Հայ մարզիկների ամենաբարձրահասակ երկրպագուն է ու երիտասարդների դեսպանը կառավարությունում: 2012-ի մեր բացառիկ ամփոփիչ հարցազրույցը ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանի հետ:***



**- Պարոն նախարար, 7 ամիս է պաշտոնավարում եք: Այն, ինչ արել եք սպորտի զարգացման համար, նկատվում է: Իսկ ի՞նչ եք արել երիտասարդների համար: Ի վերջո, նաեւ երիտասարդների հարցերի նախարարն եք:**

- Ամենակարեւորը՝ մշակել ենք երիտասարդների խնդիրների լուծման, երիտասարդների հետ աշխատանքի հայեցակարգը, որի լսումները եղել են, հանդիպումներ ենք ունեցել երիտասարդների հետ: Մենք երբեւէ չենք անտեսում երիտասարդությանը եւ շեշտը դնում սպորտի վրա: Երկուսն էլ մեզ համար կարեւոր են հավասարապես: Պարզապես մենք փորձում ենք հնարավորինս արդյունավետ աշխատել: Հավատացեք՝ արդյունքները երկար սպասել չեն տա:

**- Դուք նաեւ ՀՀ բասկետբոլի ազգային ֆեդերացիայի նախագահն եք: Ի՞նչ արդյունքներով է ֆեդերացիան ամփոփում տարին:**

- Բասկետբոլում երկար ու ձիգ տարիների տխնաջան աշխատանքից հետո, ի վերջո, ունեցանք տղամարդկանց ազգային հավաքական: Հավատացեք՝ սա մեծ ձեռքբերում է, ամենամեծը, որ ունեցել ենք 2012-ին: Հուրախություն մեզ՝ լեգեոնականներ չունենք, թիմում բոլորը հայեր են: Առանձին-առանձին ուսումնասիրել ենք նրանց խաղը, խաղային տակտիկան, իսկ 2013-ին վերջապես «կփորձարկենք» տղաներին ազգային հավաքականի կազմում: 2013-ին հավաքականը ուսումնամարզական հավաքներ կանցկացնի Երեւանում, ընկերական միջազգային հանդիպումների կմասնակցի ու կպատրաստվի 2014-ի Եվրոպայի առաջնությանը:

**- Ի՞նչ եք ակնկալում Ձրային օձից:**

- 2013-ին պետք է սկսեն մեր մարզիկները պատրաստվել Ռիո-2016-ին: Մանկապատանեկան սպորտը, համմանդամային սպորտը զարգացնելու ծրագրեր ունենք: Հույսով եմ՝ Ջրային օձը բարեհաճ կգտնվի մեր հանդեպ, եւ կկարողանանք արժանապատվորեն կյանքի կոչել 2013-ի հետ կապված բոլոր պլանները: Ուզում եմ 2013-ին կատարվեն բոլորիս նպատակներն ու ցանկությունները: Թող այն լինի առողջության, փոխադարձ հարգանքի, սիրո, ուրախության եւ գնահատանքի տարի:

ԳՈՀԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Մխիթարյանը «Շախտյորի» լավագույն հարձակողական ոճի կիսապաշտպանն է

Դոնեցկի «Շախտյորի» պաշտոնական կայքում անցկացված հարցման արդյունքներով, Հենրիխ Մխիթարյանը ճանաչվել է թիմի լավագույն հարձակողական ոճի կիսապաշտպան: Հարցման մասնակիցներից 1175-ը (45,35 տոկոս) լավագույնն է ճանաչել Հենրիխ Մխիթարյանին: 2-րդ տեղում բրազիլացի Վիլիանն է՝ 687 ձայն (26,51 տոկոս): Լավագույն եռյակը եզրափակել է Ալեքս Տեյշեյրան՝ 451 ձայն (17,41 տոկոս): Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել են 2591 ֆուտբոլասերներ:

Հիշեցնենք, որ ավելի վաղ Հենրիխ Մխիթարյանը ճանաչվել էր «Շախտյորի» լավագույն ֆուտբոլիստ 1-ին շրջանի արդյունքներով, ինչպես նաեւ Ուկրաինայի առաջնության լավագույն լեգեոնական:



Հենրիխ Մխիթարյանն Ուկրաինայի առաջնության լավագույն ռմբարկուն է: Նա 17 խաղում 18 գոլի հեղինակ է դարձել:

# «Ռեալը» պատրաստ է Ռոնալդուին վաճառել 150 մլն եվրոյով

**Մադրիդի «Ռեալի» ղեկավարությունը թիմի պորտուգալացի կիսապաշտպան Քրիշտիանու Ռոնալդուի տրանսֆերային գին է սահմանել 150 մլն եվրո: Ժամանակին «Մանչեսթր Յունայթեդից» ֆուտբոլիստին գնելու համար «Ռեալը» 94 մլն եվրո էր ծախսել: Հաշվի առնելով հետագա տարիներին ֆուտբոլիստին վճարված աշխատավարձն ու պարգեւավճարները, «Ռեալը» Ռոնալդուի դիմաց 150 մլն եվրո է պահանջում:**

**Այս գումարը բնավ էլ չի վախեցրել ֆրանսիական ՊՍԺ-ի նախագահ Նասեր Ալ Հելաիֆիին, որը հայտարարել է, որ պատրաստ է այդ գնով գնելու ֆուտբոլիստին: Նշենք, որ Ռոնալդուի եւ թիմի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուի գործակալ Ժորժե Մենդեշն այս թեմայով արդեն խորհրդակցել է «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսի հետ:**

# Մեսին Արգենտինայում միայն 3-րդն է

**Իսպանական «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին Արգենտինայի լավագույն մարզիկների ցանկում զբաղեցրել է միայն 3-րդ տեղը: Լրագրողների միջեւ անցկացված հարցման արդյունքներով Արգենտինայի այս տարվա լավագույն մարզիկ է ճանաչվել միջինքաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Սերխիո Մարտինեսը: 2-րդ տեղը գրավել է թաեքվոնդոիստ Սեբաստիան Կրիսմանիչը:**

# Պակյաոն ռինգ կվերադառնա աշնանը

**Քաշային 8 կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Մենի Պակյաոյի մարզիչ Ֆրեդի Ռոուչը ֆիլիպինցի բռնցքամարտիկին խորհուրդ է տվել ռինգ վերադառնալ 2013-ի սեպտեմբերից ոչ շուտ:**

**Ինչպես հայտնի է, Մենի Պակյաոն 2 շաբաթ առաջ մեքսիկացի Խուան Մանուել Մարկեսի հետ մենամարտում 4-րդ ռաունդում ծանր նոկաուտի էր ենթարկվել: Մենամարտից հետո նրան տեղափոխել էին հիվանդանոց: Բարեբախտաբար, նրա առողջությանը վտանգ սպառնացող ոչինչ չէին հայտնաբերել: Պակյաոն հայտարարել է, որ մի փոքր կհանգստանա ու կրկին ռինգ կվերադառնա ապրիլին կամ մայիսին:**

**Պակյաոյի մենեջեր Բոբ Արումը հայտարարել է, որ ցանկանում է կազմակերպել Մարկեսի հետ 5-րդ մենամարտը ԱՄՆ-ի Տեխասի նահանգում: Պակյաոն համաձայնվել է իր մարզչի տեսակետին:**

ՇԱԽՄԱՏ

# Սեւյանն ու Խաչիյանը գլխավորում են աղյուսակը

**ԱՄՆ-ում բնակվող հայ շախմատիստներ Սամուել Սեւյանն ու Մելիքսեթ Խաչիյանը շարունակում են հաջող ելույթները «23-րդ Մետրոպոլիտեն» մրցաշարում՝ 4,5-ական միավորով գլխավորելով աղյուսակը: 12-ամյա Սեւյանը 4-րդ տուրում հաղթեց ռուսաստանցի Ռոման Յանկովսկուն, ապա հաշտություն կնքեց Արթուր Չիբուխչյանի, Ալեխանդրո Ռամիրեսի եւ Մելիքսեթ Խաչիյանի հետ: Վերջինս ոչ-ոքի խաղաց նաեւ Ջանիբեկ Ամանովի ու Վիկտոր Շենի հետ, հաղթեց Կեատոն Կիեւրային:**

**Արթուր Չիբուխչյանը Ալեխանդրո Ռամիրեսի հետ 4-ական միավորով հետապնդում է առաջատարներին: Նա հաշտություն կնքեց Վիկտոր Շենի ու Անդրանիկ Մատիկոզյանի հետ, հաղթեց Դարվին Յանգին: Անդրանիկ Մատիկոզյանն ունի 3 միավոր:**

# Անդրեասյանն ու Հովհաննիսյանը հաջող են մեկնարկել

**Գրոսմայստեր Զավեն Անդրեասյանն ու միջազգային վարպետ Միհր Հովհաննիսյանը հաջող են մեկնարկել Գրոնինգենում անցկացվող շախմատի միջազգային մրցաշարում: Նրանք 3 հնարավորից վաստակել են 2,5-ական միավոր: Հայ շախմատիստներն ընդամենը կես միավորով են հետ մնում աղյուսակը գլխավորող Պետեր Միխալիկից, Թվան Բուրգից եւ Դանիել Գորմալիից:**

**Զավեն Անդրեասյանը մրցաշարը սկսեց բելգիացի Ստեֆան Բոյկեմայի եւ հոլանդացի Միխել դե Յոնգի նկատմամբ տոնած հաղթանակներով, ապա հաշտություն կնքեց ԱՄՆ-ը ներկայացնող Դանիել Նարոդիցկու հետ:**

**Միհր Հովհաննիսյանը եւս 2 անընդմեջ հաղթանակով մեկնարկեց՝ պարտության մատնելով սինգապուրցի Էդվարդ Լի Կային ու հոլանդացի Ջուլիան վան Օվերդամին: 3-րդ տուրում Միհրը հաշտություն կնքեց ուկրաինացի Ալեքսանդր Կովչանի հետ: Միջազգային վարպետ Վահե Բաղդասարյանը պարտության մատնելով գերմանացի Մարկուս Դենին ու հոլանդացի Գիյս Իժզերմանսին, 3-րդ տուրում պարտվեց հնդիկ Դիբիենդու Բարուային:**

**Հայաստանի 4-րդ ներկայացուցիչը՝ Մարկ Բասենցյանը վաստակել է 1 միավոր: Նա հաղթել է իսպանացի Մոնիկա Ռուիզին, պարտվել է Աննա Մատնաձեին ու Յոհաննա Աֆեկին:**

# Իսկոն Եվրոպայի լավագույն երիտասարդ ֆուտբոլիստն է

Իտալական Tuttosport-ի անցկացրած հարցման արդյունքներով «Մալագայի» 20-ամյա կիսապաշտպան Իսկոն ճանաչվել է Եվրոպայի լավագույն երիտասարդ ֆուտբոլիստ: Հարցմանը մասնակցել են եվրոպական ճանաչում ունեցող 30 ազդեցիկ լրագրողներ: Իսկոն վաստակել է 137 միավոր: Հարցման արդյունքներով Իսկոն առաջ է անցել «Միլանի» հարձակվող Ստեֆան Էլ Շարավիից եւ «Ատլետիկոյի» դարպասապահ Տիբո Կուրտուայից, որոնք զբաղեցրել են համապատասխանաբար 2-րդ եւ 3-րդ տեղերը:

«Շատ ուրախ եմ, ամեն ինչ հիասքանչ է: Երբ նայում եմ ինձանից առաջ այդ տիտղոսին արժանացած ֆուտբոլիստների ցանկը, հպարտանում եմ, որ ես եւս դափնեկիր եմ դարձել: Կարծում եմ, որ այս մրցանակը կնպաստի, որպեսզի հետագայում դառնամ համաշխարհային ֆուտբոլի իսկական «աստղ», ինչպիսին դարձել են մրցանակի նախորդ դափնեկիրները: Չէի սպասում, որ կհաղթեմ: Ինձ մեկ անգամ արդեն հրավիրել են Իսպանիայի հավաքական: Դել Բոսկեին ցանկանում եմ ապացուցել, որ արժանի եմ հավաքականի մարզաշապիկը եւս մեկ անգամ կրելու», մրցանակը ստանալուց հետո հայտարարել է Իսկոն:



Եվրոպայի լավագույն երիտասարդ ֆուտբոլիստի մրցանակը հանձնվում է 2003-ից: Առաջին դափնեկիրը Ռաֆայել վան Դեր Վարտն էր («Այաքս»): Հետագա տարիներին մրցանակին արժանացել են Ուեյն Ռունին («Մանչեսթր Յունայթեդ»), Լիոնել Մեսին («Բարսելոնա»), Սեսկ Ֆաբրեգասը («Արսենալ»), Սերխիո Ագուերոն («Ատլետիկո»), Անդերսոնը («Մանչեսթր Յունայթեդ»), Ալեխանդրո Պատոն («Միլան»), Մարիո Բալոտելին («Մանչեսթր Սիթի») եւ Մարիո Գյոտցեն («Բորուսիա» Դորտմունդ):

# Կական հավանաբար տեղափոխվի «Անժի»

Ռուսական լրատվամիջոցների տեղեկացմամբ ձմռան տրանսֆերային շրջանում Մադրիդի «Ռեալի» բրազիլացի կիսապաշտպան Կական կտեղափոխվի Մախաչկալայի «Անժի»: Կակայի հետ նախատեսվում է կնքել 4 տարվա պայմանագիր: Նրան կառաջարկվի տարեկան 8 մլն եվրո աշխատավարձ: Առայժմ կողմերը բանակցում են: Այդ տեղափոխության նախաձեռնողը «Անժիի» գլխավոր մարզիչ Գուս Հիդինգի օգնական Ռոբերտո Կառլոսն է:

30-ամյա Կական «Ռեալ» է տեղափոխվել 2009-ին «Միլանից»: Նա արքայական ակումբի հետ 6-ամյա պայմանագիր էր կնքել: «Ռեալը» բրազիլացի ֆուտբոլիստի դիմաց 70 մլն եվրո էր վճարել:

Կակային այդպես էլ չհաջողվեց դառնալ «Ռեալի» առաջատարներից մեկը: Հատկապես վերջին 2 տարիներին նա ընդհանրապես տեղ չի գտնում թիմի մեկնարկային կազմում: Ընթացիկ մրցաշրջանում Կական «Ռեալում» 103 խաղում 26 գոլի հեղինակ է դարձել:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

